ՏԱՂ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ

Տաղիս առաջին մասին տողագլուխ տառք յայտնեն հեղինակին անունն, թէ՝ Ստեփաննոս է. վանական ոճն այլ յայտնէ՝ որ Սիւնեցի Քերթողին է. Սաղմոսի և Յովբայ գրոց բանից իմաստքն և մեր Համբարձման տօնի շարականաց համաձայն են, այլ բարձր և ազնիւ և համառօտ. շատ վեհ և վայելուչ ըսուած է Քրիստոսի բռնել ընկճելն զհսկայ վիշապն՝ (մարդակուլ սատանայ), և անոր խալամը (կտրած գլուխը) չալկել յուս ձկնորսաց, այսինքն Առաքելոց, որք առաջ ձկնորսք էին, և ապա եղան քարոզք և աւետարանիչ փրկագործութեան Համբարձելոյն յերկինս։

Սոսկալի ահիւ պակեան հոյլք բոցեղինաց խմբիցն,
Տեսեալ մերունակ կերպիւ ըզՏէր համբարձեալ յերկինս.
Երկնաթռիչ ամբոխք լուսոյն հրակերպեան կառօք ճեմեալ։
Փայլուն նըշողից ձորձոյն կարմրերփեան բոսոր վառեալ,
Արեամբ ծաղկերանգ պըճնեալ. վէր մահուն յինքեան ցուցեալ։
Նո՛ր իմն ահաւոր տեսիլ. խոցուած բեւեռաց տիգին։
Ո՞վ է սա դիմեալ յերկրէ, զԵսայեան գոչեալ ձայնէր։
Սըլացեալ հըզօրն փառօք յերկինս ելանէր առ Հայր.
Ի վեր քան ըզհրաշս խորհուրդ գերակայ, անցեալ ընդ միտս.
Էական բանին յայտնեալ զխորհուրդըն ծածկեալ յազանց։

ՓՈԽ

Ես խօսիմ զարդարութիւն, զանճառ փրկութեան զխորհուրդն,
Զհըձանն հարի զլըքեալն, զողկոյզն ի խաչին ճըմլեալ,
Զգինին ամփոփեալ ի յարկս եկեղեցւոյ սըրբոյ.
Գըլուխ իմ լըցաւ ցօղով, վարսքըս մանր անձրեւով ցայթեալ.
Գոյն պատմուճանիս ներկեալ վարդագոյն արեամբ խաչին.
Ընկճեալ վանեցի զհըսկայն, ըզվիշապըն կարթիւ կալեալ,
Զխալամն հատեալ՝ բարձի ի ձըկնորսացն ուս եդեալ..
Խաղալիկ մանկանց տըւեալ՝ որդւոցն նորոյ Սիոնի.
Զդրամն արքայական գըտեալ՝ վերառեալ յաղբից տըղմոյ.
Զոչխարըն մոլար բարձի՝ ուսովք ի բարձունս բերեալ։
Դուք մի՛ զարհուրիք հրեղէնք վեհք և լուսեղէնք հոգիք.
Իշխանաց հրամայեցէք ի վեր համբառնալ ըզդրունս.
Մեծի հարսանեաց պարուց խընճոյս կազմեցէք հրաշիւք,
Եւ ուրախակից լերուք հողանիւթեայ ընութեանց սեռից։
Մ'ըառեալ ի յերկինս երկնից, և Հօր ընդ աջմէ նըստեալ։
Արդ եկայք մանկունք լուսոյ, տօնեսցուք մեծաւ յուսով.
Եւ անճառ երանութեամբ առնել զմեզ հաղորդս այժմուս.
Ցորժամ մերունակ կերպիւ՝ ծագես ի յերկնից փառօք։
Նըմա միայնոյ տացուք ըզփառս ի յաւիտեանս։

digitised by A.R.A.R.@